«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի N 2168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» _____ 2020 թվականի N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N2168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերը՝ Կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու մասին» N 2168-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ հավելված)՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

« 3. Սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված՝ առգրավված կենդանի վայրի կենդանիների վերաբերյալ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման կողմից կազմվում է արձանագրություն, ինչի մասին անմիջապես էլեկտրոնային հաղորդակցությամբ տեղեկացնում է ներկայացվում ոլորտի լիազոր մարմնին և մասնագիտացված կառույցներին միաժամանակ: Վերջիններիս ցանկը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում:»,

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-3.9-րդ կետերով՝

« 3.1. Սույն կարգի իմաստով մասնագիտացված կառույց է հանդիսանում այն կազմակերպությունը, որն իրականացնում է նաև վայրի կենդանիների պահպանություն, անհետացող տեսակների և տեղական ֆաունայի

բազմացում, ինչպես նաև ունի կենդանիների համար նախատեսված միջազգային ստանդարտներին համապատասխանող սանիտարակարանտինային տարածք։

3.2. Առգրավված կենդանի վայրի կենդանիներն առավելագույնը մեկ ամիս ժամկետով ի պահ են հանձնվում այն մասնագիտացված կառույցին, որն առաջինն է լիազոր մարմին ներկայացրել կենդանիներին պահելու վերաբերյալ գրավոր առաջարկություն՝ դրանց պահման հետ կապված ծախսերը հոգալու համաձայնությամբ։

3.3. Առգրավված կենդանի վայրի կենդանիներն ի պահ են հանձնվում բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ոլորտի լիազոր մարմնի և մասնագիտացված կառույցի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա՝ դրանում ամրագրելով դրույթ, համաձայն որի մասնագիտական կառույցը 1-ամսյա ժամկետում գիտահետազոտական հիմնարկին տրամադրում է իր մոտ ի պահ հանձնված կենդանի վայրի կենդանիների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն։

3.4. Առգրավված կենդանի վայրի կենդանիները մասնագիտացված կառույցին ի պահ հանձնելուց հետո 3-օրյա ժամկետում ոլորտի լիազոր մարմինը դրանց վերաբերյալ տեղեկատվություն է ուղարկում գիտահետազոտական հիմնարկին։

3.5. Սույն կարգի իմաստով գիտահետազոտական հիմնարկ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1–ին մասի 3-րդ ենթակետը։

3.6. Գիտահետազոտական հիմնարկը, մասնագիտացված կառույցից վայրի կենդանիների վիճակի վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա, առնվազն 1 շաբաթվա ընթացքում քննարկում է ներկայացված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում իրականացնում է տեղային ուսումնասիրություն և արդյունքների ամփոփումից հետո լիազոր մարմնին է տրամադրում դրանց վայրի բնություն բացթողնման ենթակա լինելու վերաբերյալ մասնագիտական եզրակացություն։

3.7. Մասնագիտացված կառույցին պայմանագրային հիմունքներով ի պահ հանձնված այն առգրավված կենդանի վայրի կենդանիները, որոնք.

1) բնորոշ են Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհին և դրա մաս են կազմում և գիտահետազոտական հիմնարկի կողմից տրված եզրակացության հիման վրա ենթակա են բացթողնման վայրի բնություն՝ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման տեսուչների կողմից՝ տվյալ մարզպետարանի բնապահպանական բաժնի և ոլորտի լիազոր մարմնի աշխատակիցների մասնակցությամբ բաց են թողնվում վայրի բնություն՝ իրենց ապրելավայրերին համապատասխան տարածքներ՝ լիազոր մարմնի թույլտվությամբ և սահմանած կարգով։ Կենդանիների՝ բնական միջավայր ազատ արձակման փաստն արձանագրվում է, իսկ ազատ արձակման պահը տեսագրվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից։

2) բնորոշ են Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհին և դրա մաս են կազմում, սակայն գիտահետազոտական հիմնարկի կողմից տրված եզրակացության հիման վրա ենթակա չեն բացթողնման վայրի բնություն, ինչպես նաև այն կենդանի վայրի կենդանիները, որոնք բնորոշ չեն Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհին և դրա մաս չեն կազմում՝ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և ոլորտի լիազոր մարմնի կողմից պայմանագրային հիմունքներով հանձնվում են դրանց ի պահ ստանձնած մասնագիտացված կառույցին՝ դրանց հետագա տնօրինման իրավունքով։

3.8. Մասնագիտացված կառույցը, սույն կարգի 3.7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմանագրի կնքումից հետո, 3-ամսյա պարբերականությամբ լիազոր մարմնին ներկայացնում է տեղեկատվություն՝ իրեն տնօրինման իրավունքով հանձնված կենդանի վայրի կենդանիների վերաբերյալ։

3.9. Եթե առգրավված կենդանի վայրի կենդանիներին պահելու վերաբերյալ առաջարկություն չի ստացվում, ապա լիազոր մարմինը դրանց ի պահ է հանձնում «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ պետական միջոցներով դրանց պահման ծախսերը հոգալու պայմանով։»։

2. Հավելվածի որջ տեքստից հանել «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության» բառերը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։